

ների ստացման մասին և միաժամանակ յայտնում Նորին Սրբութեան իւր գոհունակութիւնը վերոյիշեալ նուիրաբերութեան համար:

Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Նորին բարձր գերագնութիւն Ն. Պետերսոնը իւր 25 օգոստոսի գրութեամբ դիմում է Ազգիս Վեհափառ Հայրապետին և յանձնարարութեամբ Տ. Փոխարքայի խնդրում Նորին Սրբութիւնից կարգադրել ժողովելու Ռուսահայոց բոլոր եկեղեցիներում գանձանակազրամ յօգուտ վիրաւոր և հիւանդ զինուորների, և գոյացեալ գումարը ուղարկել տեղական Պետական գանձարանների միջոցով Կարմիր Պաշտի ընկերութեան: Նորին Վեհափառութիւնը Իւր 29 օգոստոսի կոնդակով պատուիրում է Սինօդին կարգադրել շրջաբերական հրամանագրութեամբ յայտնել թեմակալ առաջնորդների ժողովել բոլոր եկեղեցիներում գանձանակազրամ վերոյիշեալ նպատակով:



Տ. ՍՈՒՔԻԱՍ ԱՐԷՎՈՍԿՈՎՈՍ ՊԱՐԶԵՆՏ

Սեպտ. 12-ին առաւօտեան ժամը 4-ին երկամեայ ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր մահկանացուն ս. էջմիածնի միաբան Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարգեանցը 77 տարեկան ծեր հասակում: Հանգուցեալը ծնուել է Հին Նախիջևանի Աստապատ գիւղում 1837 թ. դեկտեմբերի 10-ին: Մտել է ս. էջմիածնի կուսակրօն միաբանից շարքը 1849 թ. հոկտ. 20-ին. ուսումը ստացել է ս. էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում: Ընդունակ սովորող է եղել և բաւական հմուտ էր գրոց լեզուին: Իրպրութեան աստիճան է ստացել 1856 թ. մայիսի 20-ին: Տ. Մակար արքեպիսկոպոսից (յետոյ կաթողիկոս) ստացել է հանգուցեալը սարկաւազութեան աստիճան 1857 թ.

օգոստոսի 4-ին: Տ. Տ. Մատթէոս Ա. կաթողիկոսի հրամանով Եղիազար Եպիսկոպոսը ձեռնադրել է նորան արեղայ 1860 թ. փետրվարի 27-ին: Ս. Էջմիածնի ժառանգաւորաց զպրոցում կարգուել է հայոց լեզուի ուսուցիչ և Մայր Տաճարի զգեստատան կառավարիչ 1860 թ. մայիսի 25-ին: Նշանակուել է Թիֆլիսի վիճ. կոնսիստորիայի անդամ 1863 թ. նոյեմբերի 22-ին: Մակար արքեպիսկոպոսից ստացել է վարդապետական աստիճան 1869 թ. փետրվ. 14-ին: Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակով արձակուած է Թիֆլիսի կոնսիստորիայի անդամութիւնից և նշանակուած Ախալցխայի յաջորդ 1869 թ. փետրվարի 28-ին: Ս. Էջմիածնի Սինոդի հրամանով փոխադրուած է Ախալցխայից Ալէքսանդրապոլ յաջորդութեան պաշտօնով 1872 թ. հոկտեմբեր 13-ին: Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսը արձակելով Ալէքսանդրապոլի յաջորդութեան պաշտօնից՝ նշանակում է նորաբաց Գէորգեան Ճեմարանի փոխ-տեսուչ 1874 թ. օգոստոսի 18-ին: Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսից ստացել է Եպիսկոպոսական աստիճան 1875 թ. հոկտ. 19-ին: Սինոդի հրամանով նշանակւում է Ալէքսանդրապոլի յաջորդ 1875 թ. նոյեմբերի 20-ին, որից արձակւում է 1877 թ. ապրիլի 21-ին: Նշանակւում է Նոր Նախիջևանի յաջորդ 1881 թ. հոկտ. 31-ին: Բարձրագոյն հրամանով նշանակւում է ժամանակաւոր կառավարիչ Աստրախանի թեմի 1883 թ. ապրիլի 7-ին: Բարձրագոյն հրամանով նշանակւում է Սինոդի անդամ 1886 թ. դեկտ. 10-ին: Բարձրագոյն հաճութեամբ նշանակւում է Երևանի թեմի փոխ-թեմակալ՝ միաժամանակ համարւում նաև Սինոդի անդամ 1888 թ. հոկտ. 27-ին: Արձակւում է Երևանի թեմի փոխ-թեմակալ պաշտօնից և ֆեոում Սինոդի անդամ 1890 թ. օգոստոսի 22-ին: Բարձրագոյն հրամանով արձակւում է Սինոդի անդամութիւնից 1891 թ. սեպտ. 10-ին: Նշանակւում է Ատրպատականի թեմի առաջնորդ 1893 թ. դեկտ. 16-ին: Թրիմեան կաթողիկոսից ստանում է արքեպիսկոպոսութիւն 1893 թ. դեկտ. 22-ին: Արձակւում է Ատրպատականի թեմի առաջնորդութիւնից 1895 թ. սեպտ. 21-ին:

Խրիմեան կաթողիկոսի կոնդակով նշանակուած է Երևանի թեմի փոխանորդ 1899 թ. հոկտ. 26-ին: Այդ պաշտօնից արձակուած է 1903 թ. 14 հոկտեմ., երբ կալուածներէ գրաւման տարին աքսորուած է Օրենբուրգ: Վարդապետական խաչ է ստացել 1861 թ. մայիսի 9-ին: Ծաղկեայ փլոնի իրաւունք է ստացել 1863 թ. մարտի 30-ին: Եպիսկոպոսական պնակէ կրելու իրաւունք է ստացել 1882 թ. հոկտ. 25-ին: Ստացել է ս. Ստանիսլավի առաջին կարգի շքանշան 1886 թ. ապրիլի 13-ին:

Բարձրագոյն հրամանով աքսորուել է Օրիօլ քաղաքը 1891 թ. սեպտ. 19-ին, որտեղից վերադարձել է 1893 թ. սեպտ. ամսին:

Բարձրագոյն հրամանով աքսորուել է Օրենբուրգ քաղաքը 1903 թ. հոկտեմ. 14-ին, որտեղից վերադարձել է 1905 թ. նոյեմբ. ամսին:

Ինչպէս ընթերցողը կրնա տեսնել ցուցակ ծառայութիւնից, Տ. Սուքիաս արքեպիսկոպոսն երկար տարիներ վարել է պատասխանատու պաշտօններ թէ ս. էջմիածնում և թէ գրաւած ժողովրդի մէջ: Անշուշտ նորան ճանաչողները կրկնապէս՝ որ հանգուցեալ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը ամեն տեղ վարել է իւր պաշտօնը շատ եռանդուն և արդիւնաւոր կերպով: Յաջող քարոզիչ էր հանգուցեալը: Սրտանց սիրում էր ս. էջմիածինը և ամենայն հարազատութեամբ միշտ նախանձախնդիր է եղել նորա շահերին: Ս. էջմիածնի Տպարանի շինութեան մի մասը շինուած է Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի ծախքով: Վերջերս մօտ 3000 ռուբլի յատկացրել էր հրատարակելու «Պատմագիրք Հայոց» հրատարակութեանց շնորհը, և արդէն հրատարակուել են գիտական եղանակով 1) Ագաթանգեղոս, Մ. Խորենացի և Ղ. Փարբեցի: Մեծ չափով նպաստել է Օրմանեան արքեպիսկոպոսի գրքերի հրատարակութեան: Մասնաւոր անհատների հրատարակութեանց համար նոյնպէս բաւական նպաստներ է տուել: Առատ կերպով օգնել է իւր հարազատներին: Ս. էջմիածնի դանձարանում պահ է տրուած հանգուցեալի ձեռքով մահից երկու ամիս առաջ մի կնքուած

ծրար, որտեղ դրուած են իւր կտակը և մի խոշոր գումար, որի մասին, ծրարը բացուելուց յետոյ, մանրամասն տեղեկութիւն կը տրուի «Արարատ»ի միջոցով:

Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի թաղումը կատարուեց սեպտ. 14-ին Սաչվերացի հանդիսաւոր տօնին մեծ շուքով: Նախընթաց օրը ժամը 3-ին շաբաթ երեկոյեան Մայր Տաճարի զանգերը տխուր հնչեցին և բոլոր միաբանները շտապեցին ներկայ լինելու հանգուցեալի յուղարկաւորութեան: Միաբանները ժողովուել էին հանգուցեալի բնակարանի առաջ: Երիտասարդ միաբանները սենեակից ցած բերին հանգուցեալի դագաղը և ապա ըստ հեղեցական կարգի 7 տեղ հանգիստ տալով տարան Մայր Տաճար և զրին դիասեղանի վրայ: Նորին Վեհափառութիւնը իջաւ Մ. Տաճար՝ եպիսկոպոսներով շրջապատուած՝ Վեհափառը հոգւոց ասաց հանգուցեալի վրայ: Միւս օրը սեպտ. 14-ին ս. պատարագ մատուցեց Տ. Աշոտ եպիսկոպոսը և ողջոյնից առաջ պատարագիչ եպիսկոպոսը հանգուցեալի օծման կարգը կատարեց, որից յետոյ Վեհափառը և ապա միաբանութիւնը կարգով հրաժեշտի ողջոյնը ստացին հանգուցեալից: Տ. Աշոտ եպիսկոպոսը պատշաճ կերպով դամբանական խօսեց՝ հանգուցեալի արածները դրուատելով: Ս. պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգը կատարելով՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և ժողովրդի խումն բազմութեան յուղարկաւորութեան տխուր հանգէսը առաջ շարժուեց դէպի միաբանական գերեզմանատունը: Գերեզմանատան կարգը կատարելով՝ հոգին յանձնեցին հանգ. Սուքիաս սրբազանի մարմինը: Թաղումից յետոյ Երեանից եկած հիւրերին ճաշ տրուեց վանքի հիւրատանը: Թող թեթիւ լինի հոգը հանգուցեալի գերեզմանի վրայ և հանգուցեալի յիշատակը անմոռաց մնայ նորան յարգողների սրտում: Նորին Վեհափառութիւնը ստացել է ցաւակցական հեռագիրներ՝ Ներսէս և Մաղաքիա արքեպիսկոպոսներից, Հառիճոյ հոգաբարձութիւնից, բժ. Նաւասարդեանցից և Կարապետ Կոստանեանցից:

Բ. Վ. Ա.